ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

27.03.2014թ.
214-ի 3

ՀՀ ոստիկանության անձնագրային եւ
վիզաների վարչության պետ,
ոստիկանության գնդապետ
պարոն Նորայր Մուրադխանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մուրադխանյան,

Մեզ է դիմել ՀՀ քաղաքացի Նաիրա Կարապետյանը եւ խնդրել է իրեն օգնել տեղեկություն ստանալու հարցում: 2007թ.-ին նրա որդու՝ Գրիգորի Գենադիի Վարտանովի քաղաքացիությունը դադարեցվել է սեփական դիմումի հիման վրա՝ այլ երկրի՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն ստանալու համար:

Գրիգորի Վարտանովի իրավունքների պաշտպանության համար, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները,

1. Տեղեկանք այն մասին, որ Գրիգորի Վարտանովը չի հանդիսանում ՀՀ քաղաքացի,
2. Ո՞ր թվականին է Գրիգորի Վարտանովը զրկվել ՀՀ քաղաքացիությունից,
3. Խնդրում ենք տրամադրել Գրիգորի Վարտանովի քաղաքացիությունից զրկվելու հիմքերը հաստատող (քաղաքացիությունից զրկելու հիմք հանդիսացած) փաստաթղթերի պատճենները (այդ թվում՝ խնդրում ենք նշել իրավական ակտերի համապատասխան դրույթները):

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան